

ՀՐԱՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N 12-Ն

«07» օգոստոս 2012թ.

**ԱՐՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԿԱՐԳՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ ՝

1. Հաստատել արյան պարտադիր հետազոտությունների ցանկը, իրականացման կարգն ու մեթոդները՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ի.Աբգարյանին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:

Դ.ԴՈՒՄԱՆՅԱՆ

**ԱՐՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԿԱՐԳՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

1.Սույնով սահմանվում են արյան (այսուհետ՝ դոնորական արյան փորձանմուշ) պարտադիր հետազոտությունների ցանկը, իրականացման կարգն ու մեթոդները:

2.Դոնորական արյան փորձանմուշների պարտադիր հետազոտություններն ուղղված են արյան միջոցով վարակների փոխանցման վտանգի նվազեցմանը:

3.Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության և Եվրոխորհրդի Արյան փոխներարկման կոմիտեի «Արյան բաղադրամասերի ստացման, օգտագործման և որակի ապահովման R(95)15» ուղեցույցի երաշխավորագրերի, դոնորական արյան փորձանմուշը պարտադիր հետազոտվում է հետևյալ ինֆեկցիաների /վարակների/ հարուցիչների նկատմամբ՝

- 1) վիրուսային հեպատիտ Բ--ի,
- 2) վիրուսային հեպատիտ Ց-ի,
- 3) սիֆիլիսի,
- 4) մարդու իմունային անբավարարության վարակի,
- 5) բրուցելոզի:

4.Դոնորական արյան փորձանմուշների պարտադիր հետազոտությունների միջոցով որոշվում է դոնորական արյան փորձանմուշի խմբային և ռեզուս պատկանելիությունը:

5.Դոնորական արյան փորձանմուշի մեջ պարտադիր որոշվում է ալանինամինատրանսֆերազա ֆերմենտի (ԱԼՏ) քանակը:

6.Դոնորական արյան փորձանմուշների պարտադիր հետազոտություններն իրականացվում են հետևյալ կարգով ու մեթոդներով՝

- 1)մարդու իմունային անբավարարություն առաջացնող վիրուս 1 և 2 տիպի հարուցիչների հակաճինների և հակամարմինների որոշում իմունաֆերմենտային

- մեթոդով՝ թեստ-համակարգի (ռեակտիվ) արտադրողի օգտագործման ցուցումների համաձայն,
- 2) ավստրալիական հակաճնի էյջ Բի ս էյ ջի- (HBsAg) որոշում իմունաֆերմենտային մեթոդով՝ թեստ-համակարգի (ռեակտիվ) արտադրողի օգտագործման ցուցումների համաձայն,
- 3) հակա- էյջ բի սի Օ էո (Hbcor) հակամարմինների որոշում իմունաֆերմենտային մեթոդով՝ թեստ-համակարգի (ռեակտիվ) արտադրողի օգտագործման ցուցումների համաձայն,
- 4) հակա-էյջ Սի Վի (HCV) հակամարմինների որոշում իմունաֆերմենտային մեթոդով՝ թեստ-համակարգի (ռեակտիվ) արտադրողի օգտագործման ցուցումների համաձայն,
- 5) հակապալլիդում հակամարմինների որոշում պրեցիպիտացիայի էոՓիէո (-RPR) և ագլյուտինացիայի Թի Փի էյջ էյ -(TPHA) կամ իմունաֆերմենտային մեթոդով՝ թեստ-համակարգի (ռեակտիվ) արտադրողի օգտագործման ցուցումների համաձայն,
- 6) հակաբրուցելոզային հակամարմինների որոշում ագլյուտինացիայի կամ իմունաֆերմենտային մեթոդով՝ թեստ-համակարգի (ռեակտիվ) արտադրողի օգտագործման ցուցումների համաձայն:
7. Դոնորական արյան փորձանմուշում ալանինամինատրանսֆերազա ֆերմենտի (ULS) ակտիվության որոշում կինետիկական մեթոդով՝ թեստ-համակարգի (ռեակտիվ) արտադրողի օգտագործման ցուցումների համաձայն::
8. Դոնորական արյան փորձանմուշում որոշվում են՝ էրիթրոցիտային Օ (O), էյ-(A), B- (Բի), հակաձինները և շիճուկում որոշվում են α (ալֆա), β (բետա) հակամարմինները խաչաձև մեթոդով: Հակաձին Այ-A-ի թույլ արտահայտվածության դեպքում որոշվում է նաև էյջ (H) հակաձինը:
9. Դոնորական արյան փորձանմուշում որոշվում են ռեզուս համակարգի Դի Սի (D,C) հակաձինները՝ մոնոկլոնալ հակամարմիններով կամ կոնագլյուտինացիայի մեթոդով:
10. Հնարավոր հետփոխներարկումային ռեակցիաների և բարդությունների պատճառների վերլուծման նպատակով հետազոտված փորձանմուշները պահպանվում են՝

1) վարակային անվտանգության հետազոտման նպատակով վերցված փորձանմուշները սառեցվում և պահպանվում են -20°C ջերմաստիճանի պայմանում մեկ օրացուցային տարի, որից հետո խոտանվում են.

2) խմբային և ռեզուս պատկանելիության որոշման նպատակով վերցված փորձանմուշները պահպանվում են $+2 +4^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի պայմանում 14 օրացուցային օր, որից հետո խոտանվում են:

11. Դոնորական արյան փորձանմուշի հետազոտությունների իրականացման դեպքում լրացվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի հունվարի 24-ի N 02-Ն հրամանով հաստատված N 4, N 6, N 7, N 8, N 9, N 10 ձևերը: